ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՎ ԴԵՂՁՈՒՏԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Բանալի բառեր՝ *Կայենո գավառ, Դեղձուտի վանք, Առաքելոց վանք, Մահկանաբերդ, Վանական վարդապետ, Առաքել վարդապետ, Տարսոն, գրչության դպրոց, գաղափար օրինակ:*

Պատմական Կայենո գավառի հոգևոր-մշակութային կենտրոն Դեղձուտի վանքի[1] պատմությունը շատ քիչ է ուսումնասիրված: Պատճառն այն է, որ բնակավայրերից ու բանուկ ճանապարհներից կտրված վայրում գտնվող վանքի ու նրա շրջակայքի վերաբերյալ եղած նյութերը շատ քիչ են: Մեզ հասած հիմնական աղբյուրը տասներկու վիմագիր արձանագրություններ (հիմնականում նվիրատվական) և երեք ձեռագիր հիշատակարաններ են, որոնց հաղորդած տեղեկություններից երևում է, որ միջնադարում Դեղձուտը՝ իբրև հոգևոր և գրչության կենտրոն, լայն ճանաչում է ունեցել, իսկ նրա բաբունապետը մեծարվել է որպես «մեծ և հռչակավոր վարդապետ»: Այնուամենայնիվ, միջնադարյան ոչ մի հեղինակ չի հիշատակում Դեղձուտը: Անգամ Կիրակոս Գանձակեցին, որ իր Պատմության մեջ քանիցս հիշում է ոչ հեռու գտնվող Մահկանաբերդն ու Մահկանաբերդի իշխաններին[2], ոչ մի ակնարկ չունի Դեղձուտի վանքի ու նրա բաբունապետի մասին: Սադուն Բ-ին հիշատակող Գրիգոր Ակներցին նույնպես լռում է Դեղձուտի մասին[3]:

---

1 Վանքն աղբյուրներում կոչվել է նաև Դեղձնուտ, Դեղձկուտ, Դեղծնուտ, Դեղցնուտ անուններով: **Մ. Բարխուդարեանց**, *Արցախ*, Բագու, 1895, էջ 380-381, **Հ. Ոսկեան**, *Արցախի վանքերը*, Վիեննա, 1953, էջ 218-219, **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2, Երևան, 1988, էջ 75:

2 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն հայոց*, աշխատասիրությամբ ***Կ. Մելիք-Օհանջանյանի***, Երևան, 1961, էջ 208-210, 215, 365, 386:

3 **Գրիգոր վրդ. Ակներցի**, *Պատմութիւն թաթարաց*, առաջաբանը և ֆնն. բնագիրը՝ ***Ն. Պողարեանի***, Երուսաղէմ, 1974, էջ 42, 43, 48, 49, տե՛ս նաև **Գրիգոր Ակներցի**, *Պատմութիւն վասն ազգին Նետողաց*, ֆնն. բնագիրը՝ ***Ն. Պողարյանի***, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ ***Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի***, Երևան, 2011, էջ 69, 71, 81, 83:

Վանական համակառույցի նկատմամբ հետաքրքրություն առաջացավ միայն XIX դարավերջին, երբ նախ մի նյութ հրապարակվեց «Արձագանքում»[4], ապա Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցն[5] անդրադարձավ Դեղձուտին՝ տալով ճանաչողական բնույթի տեղեկություններ, իսկ նախորդ դարի հիսունականների սկզբին Գ. Սարգսյանն առաջին անգամ ուսումնասիրեց վանքն ու հրատարակեց նրա վիմագրերը[6]: Սակայն Դեղձուտը՝ որպես գրչության կենտրոն, մնաց չուսումնասիրված, իսկ նրա բաբունապետի անձի ինքնության հարցը՝ վիճահարույց:

Դեղձուտի վանքը և համանուն բնակատեղին, որոնցից միայն ավերակներ են մնացել, գտնվում են Իջևանի շրջանի Կիրանց, նախկինում Կունեն կոչված գյուղից հարավ-արևմուտք՝ Խնձորկուտ գետակի ձախ ափին՝ անտառապատ լեռների լանջերին: Վանական համալիրի դեմ-դիմացի բարձունքում Մահկանաբերդ ամրոցն է, որը տեղաբնակներն անվանել են «բերդի քար» (այն դարձրել են հատուկ անուն՝ Բերդաքար կամ Բերդքար)[7]: Անառիկ ամրոցը XII-XIII դարերում վրաց արքունիքում բարձր հեղինակության հասած Մահկանաբերդի Արծրունիների նստավայրն էր: Շրջակայքով կոչվել է «գաւառ Մահկանաբերդոյ» կամ «յերկիր Մահկանաբերդոյ»: Դեղձուտը մտնում էր Մահկանաբերդի գավառի մեջ, ինչպես վկայված է նաև հիշատակարաններում՝ «յերկիրս Մահկանաբերդոյ՝ ի վանս Դեղձուտի»: Դեղձուտով էր անցնում Կյուրիկյանների Տաշիր-Զորագետի մայրաքաղաք Լոռիբերդ տանող քարավանային ճանապարհը:

Ձեռագիր աղբյուրներում առաջին անգամ Դեղձուտի վանքը հիշատակվում է 1042 թ. Բասեն գավառի Որդրու քաղաքում Սարգիս գրիչի ձեռամբ Մեսրոպի որդի Սարկավագ քահանայի համար երկաթագրով օրինակված մագաղաթյա մի Ավետարանի հետագայի (XII դ.) հիշատակարանում[8]: Այնտեղ նշվում է, որ Ավետարանը ձեռք է բերել Հովհաննեսը և նվիրել Դեղձուտի վանքին. «Ես՝ նուաստ Յոհաննէս, ստացա զսուրբ Աւետարանս յիմ հալալ արդեանց եւ ետու վասն միաբանութեան յիշատակ հոգւոյ իմոյ ի սուրբ վանքն Դեղձուտ: Արդ, մի ոք իշխեսցէ հանել զսա յայս վանիցս, զի մի եւ ինքն ելցէ ի կենաց որդւոյն Աստուծոյ»[9]:

---

4 **Քաջիկեան**, «Ճանապարհորդական յիշատակարան» (հոդվածաշար), *Արձագանք*, 1888, թ. 12, էջ 159:

5 **Մ. Բարխուդարեանց**, *Արցախ*, էջ 380-381:

6 **Գ. Սարգսյան**, «Դեղձուտի վանքը և նրա վիմագրությունը», *Էջմիածին*, 1953, թ. Դ, էջ 33-44:

7 **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**,նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1986, էջ 667, **Ռ. Սիմոնյան**, «Մահկանաբերդ», *Էջմիածին*, 2003, է, էջ 47:

8 ՄՄ ձեռ. 6384, թ. 256, նյութ՝ մագաղաթ, 24,5x19, գիր՝ ուղղանիգ երկաթագիր, տող՝ 21: Տե՛ս նաև **Ա. Մաթևոսյան**, *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր*, Երևան, 1988, էջ 88:

9 ՄՄ ձեռ. 6384, թ. 107 բ: Հովհաննեսի հիշատակարանը Ա. Մաթևոսյանը տեղադրել է ԺԲ դարի հիշատակարանների շարքում, տե՛ս **Ա. Մաթևոսյան**, նշվ. աշխ., *Ե-ԺԲ դարեր*, էջ 327:

Մատյանը կրկնագիր է: XIII դարում քերել են մագաղաթը և վրայից գրել են բոլորգրով, սակայն Հովհաննեսի երկաթագրով գրված հիշատակարանը թողնել են անաղարտ: Չնայած Դեղձուտին վերաբերող գրավոր առաջին հիշատակությունը XII դարից է, ենթադրվում է, որ գլխավոր եկեղեցին հիմնադրվել է VIII դարում կառուցված շինության տեղում, որ նույնացվել է Տաղձանք կոչված վանքի հետ[10]*:*

Վիմագիր արձանագրություններում Դեղձուտի վանքի մասին հիշատակությունները վերագրվում են XIII դարի երկրորդ կեսին, երբ Մահկանաբերդի տեր է դառնում Քուրդ իշխանի թոռնորդին՝ Շերբարոքի որդի Սադուն Բ-ը, իսկ Դեղձուտ և Առաքելոց վանքերի առաջնորդությունն ստանձնում է Առաքել վարդապետը: Արձանագրության համաձայն՝ Դեղձուտի վանական համալիրի կառուցումն ավարտվել է 1274 թվականին: Այն բաղկացած է գլխավոր եկեղեցուց՝ հար և նման Գետկավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, ինչը ենթադրել է տալիս, որ ժամանակով և տարածությամբ իրար մոտ երկու եկեղեցիների կառուցող վարպետը նույն անձը կարող է լինել[11]*: Գլխավոր եկեղեցուն արևմուտքից կից է գավիթը, իսկ հյուսիսից երկրորդ փոքր եկեղեցին է՝ թաղապատ, հասարակ մի շենք՝ կիսամշակ քարերով ու կրաշաղախով: Վանական համալիրի մեջ են մտել միաբանների բնակելի և օժանդակ շինությունները, ինչպես նաև վանքից հյուսիս-արևմուտք տարածված Դեղձուտ բնակատեղին ու նրան կից գերեզմանոցը:*

Առաքել վարդապետը եկեղեցու շինարարական արձանագրությունը թողել է գլխավոր եկեղեցու մուտքի մոտ կանգնեցված գեղաքանդակ խաչքարին, որը չնայած պատվանդանից ընկնելով, ջարդվել ու բեկորների է վերածվել, բայց արձանագրությունը կարդացվում է գրեթե ամբողջապես. «Անեղին Աստուծոյ զաւրութեամբ յաշխարհակալութեան Աբաղա ղանին եւ յիշխանութեան ամիրսպասալար աթաբակ Սադունին ես՝ Առաքելս՝ նուաստ սպասաւոր բանին Աստուծոյ, յերկրէն Կիլիկո՝ ի գաւառէն Տարսոնի, կամակցութեամբ եղբարցս շինեցաք

---

[10] **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, *նշվ. աշխ.*, հ. 2, էջ 76: Այս Տաղձանք կոչված հին վանքը չպետք է շփոթել Արցախի Մեծկվենք գավառում Ղ. Ալիշանի հիշատակած Տաղձանք անունով վայրի հետ, որը VI դարից եպիսկոպոսանիստ է եղել: **Ղ. Ալիշան**, *Արցախ*, փոխ. գրաբարից՝ ***Գ. Թոռունյանի***, Երևան, 1993, էջ 39:

[11] Նոր Գետիկի Ս. Գրիգոր Լուսավորիչ եռախորան եկեղեցու շինարար վարպետի անունը հայտնի չէ: 1237-1241 թվականներին եկեղեցին կառուցվել է Արցախի կողմնապետ Վախթանգի թոռ և Սարգսի որդի, Իվանեի որդի Ավագի հեջուբ Գրիգոր Տղա իշխանի միջոցներով: Գրիգոր իշխանը Ավագից խնդրում է Նոր Գետիկում իր համար գերեզմանատուն և այդ մասին թողնում ընդարձակ արձանագրություն: Կիրակոս Գանձակեցին ճոխության և նրբագեղության համար եկեղեցին անվանել է «զարմանակերտ»: *Դիվան հայ վիմագրության, Իջևանի շրջան*, պրակ VI, կազմ.՝ ***Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան***, Երևան, 1977, էջ 70: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 223:

զեկեղեցիս ամենայն պատրաստութեամբ եւ զգաւիթս եւ կանգնեցաք զսուրբ նշանս աստուածընկալ ի նեղ ժամանակի դառն աշխատութեամբ բարեխաւս մեզ եւ ծնողաց մերոց ... եւ պարոնին եւ զաւակաց նորա, որ եղեւ ձեռնտու եւ մխիթար կենաց մերոց արքեպիսկոպոսութեան Հաղբատա տէր Յովանեսի»[12]:

Ուրեմն, Առաքելը Կիլիկիայի Տարսոն գավառից է և Դեղձուտ է եկել Աբաղա խանի աշխարհակալության, Հովհաննես Խաչենցու առաջնորդության և Սադուն Բ-ի իշխանության տարիներին: Հետևելով այս արձանագրությանը՝ Առաքելի Մահկանաբերդ գալը պետք է դնել 1265 թվականին, այսինքն Աբաղա խանի կառավարման սկզբից, կամ դրանից ոչ շատ հետո, մինչև 1267 թվականին, որովհետև Առաքելոց վանքում ծնողների հիշատակին Բիսում քահանայի կանգնեցրած խաչքարի այս թվականի արձանագրության մեջ Առաքելն արդեն հիշվում է որպես առաջնորդ և «մեծ վարդապետ». «Ի թվիս Հայոց ՉԺԶ (1267) իշխանութիւն մեծ իշխանաց իշխանին Սադունի եւ յառաջնորդութիւն մեծ վարդապետին Առաքէլի, որ էր նմանեալ սուրբ Առաքելոցն եւ էր դուռն եւ արեվելք երկրիս եւ պարծանք եւ բարէխոս առ Աստուած եւ մարդիկ»[13]: Այն, որ Առաքելը մեծ հեղինակություն էր վայելում տակավին 1267 թվականին, երբ դեռ Առաքելոց վանքում էր, երևում է արձանագիր հեղինակի հաղորդումից, որ Առաքելը նման էր սուրբ առաքյալներին և երկրի արևելյան կողմում պարծանք ու բարեխոս էր Աստծո ու մարդկանց առաջ: Հետագայում Առաքելը հիշվում է Դեղձուտի վանքի ևս երկու՝ 1276 և 1292 թվականների արձանագրություններում, ինչպես նաև 1280 թվականին գրված երկու ձեռագրերի հիշատակարանների մեջ:

Համադրելով Առաքելոց և Դեղձուտ վանքերի թվակիր արձանագրությունները ու ձեռագիր հիշատակարանները, ստանում ենք հետևյալ պատկերը: Մահկանաբերդ գավառում շուրջ քսանյոթ տարվա ժամանակաշրջան է ընդգրկում Առաքելի գործունեությունը: 1265-1267 թվականների ընթացքում գալով Մահկանաբերդ՝ Առաքելը սկզբում հաստատվել է Առաքելոց վանքում, եղել է վանքի առաջնորդը և կոչվել է մեծ վարդապետ: Հետագայում առաջնորդել է նաև Դեղձուտի միաբանությունը, 1274 թվականին ավարտել է Դեղձուտի գլխավոր եկեղեցու ու գավիթի շինարարությունը: Միաբանության և ուսումնական կենտրոնի համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ՝ հավանաբար այս ժամանակից էլ Դեղձուտում ծավալվել է գրչության գործը: 1274 թվականից հետո Առաքելն ապրել է ևս տասնութ տարի, վախճանվել հավանաբար 1292 թվականին ու թաղվել Դեղձուտում:

---

12 *Դիվան*, պրակ VI, էջ 112:

13 *Դիվան*, պրակ VI, էջ 211-212:

Գարեգին Հովսեփյանը Առաքել վարդապետին նույնացնում է Վանական վարդապետի աշակերտ Առաքելի հետ, որը, Վանականից ստանալով վարդապետական աստիճան, եկել է Մահկանաբերդի գավառ և Դեղձուտում հիմնել գրչության դպրոց: «Առաքել վարդապետն անկասկած Վանականի աշակերտն էր, Վարդանի և Կիրակոսի ընկերը, որին հիշում է Մաղաքիան», — գրում է Գ. Հովսեփյանը[14]*: Այս տեսակետը առարկությունների տեղիք է տվել այն հիմամբ, որ նախ՝ Գարեգին Հովսեփյանին հայտնի չեն եղել Առաքելի թողած արձանագրությունը և այն հաղորդումը, որ Առաքելը Կիլիկիայի Տարսոն գավառից է, և նրան համարել է Վանականի աշակերտը: Մինչդեռ Առաքելը, լինելով Տարսոնից, չէր կարող ուսում ստանալ Վանականի մոտ: Ապա Վանականի աշակերտներից Կիրակոս Գանձակեցին ու Վարդան Արևելցին հազիվ թե իրենց պատմություններում գոնե մեկ անգամ չհիշեին իրենց ուսումնակից ընկերոջը*[15]*:*

Ծագումով կիլիկեցի Առաքելի՝ Վանականի աշակերտ լինելու հանգամանքը մենք չենք հաստատում՝ ուղղակի վկայություններ չունենալու պատճառով, բայց նաև չենք հերքում՝ հետևյալ տրամաբանությամբ: Նախ, վերոհիշյալ փաստերը հազիվ թե տարակուսանք առաջացնեն այն պարզ պատճառով, որ խաչաձևվում էին մեծ դպրոցների փորձերը, և այդ կենտրոններում սովորելու էին գալիս կրթական որոշակի մակարդակ և գիտելիք ունեցողներ ոչ միայն մերձակա, այլև հեռավոր գավառներից: Այդ ավանդները պահպանվել էին Կիլիկիայի, Անիի, Հաղբատի, Սանահինի, Նոր Գետիկի, Խորանաշատի դպրոցներում: Փաստերը շատ են: Մխիթար Գոշը, որ Հյուսիսային Հայաստանի գրական միջավայրի ծնունդն էր, հանգամանքների բերումով գալիս է Կիլիկիա, կրթություն ստանում Սև լեռան Կարմիր վանքում, կրկին վարդապետական աստիճան ստանալուց հետո վերադառնում հայրենիք: Գրիգորը, որը Վանական վարդապետի աշակերտն էր Խորանաշատում, հետագայում գործունեությունը շարունակեց Ակներում՝ դառնալով վանքի միաբան: Դարձյալ Վանականի աշակերտներից Հովսեփը, որ փայլում էր դավանաբանական հարցերում, Արտազ գավառի թեմակալն էր: Տարոնից եկած Խաչատուրը հաստատվել էր Հաղարծինում, դարձել միաբանության առաջնորդ և դպրոցի հիմնադիր, դեռ ավելին՝ Կիլիկիայից բերած խազերն էր տարածում Հյուսիսային Հայաստանի դպրոցներում:

Առաքելը Տարսոնից էր եկել Մահկանաբերդ և առաջնորդում էր Առաքելոց ու Դեղձուտ վանքերի միաբանությունները: Արդ, հարց է ծագում: Ինչո՞ւ Առաքելը չէր կարող Տարսոնից գալ և կրթություն ստանալ Խորանաշատում, հատկապես որ Խորանաշատն ու Դեղձուտը տարածությամբ իրարից շատ հեռու չեն:

---

[14] **Գ. Հովսեփյան**, *Հավուց թառի Ամենափրկիչը* (Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ), 1987, էջ 70, ծանոթ. 185: *Դիվան*, պրակ VI, էջ 110:

[15] *Դիվան*, պրակ VI, էջ 110:

Կրկին դառնանք Առաքելի թողած արձանագրությանը. «Ես՝ Առաքելս՝ նուաստ սպասաւոր բանին Աստուծոյ, յերկրէն Կիլիկո՝ ի գաւառէն Տարսոնի, կամակցութեամբ եղբարցս շինեցաք զեկեղեցիս ամենայն պատրաստութեամբ եւ զգաւիթս եւ կանգնեցաք զսուրբ նշանս աստուածընկալ ի նեղ ժամանակի դառն աշխատութեամբ բարեխաւս մեզ եւ ծնողաց մերոց»: Այն, որ Առաքելը Կիլիկիայի Տարսոն գավառից է, հաստատում է անձամբ Առաքելն ինքը: Սակայն արձանագրությունից կարող ենք հասկանալ ոչ միայն նրա այդ պահին որտեղից եկած լինելը, այլև որտեղացի լինելը: Այսինքն՝ Առաքելը, լինելով Կիլիկիայի Տարսոն գավառից, հանգամանքների բերումով Մահկանաբերդի գավառի Դեղձուտի վանքում է, որտեղ իր հոգևոր եղբայրների հետ կառուցել է եկեղեցի, որի առաջնորդն ու գրչության դպրոցի հիմնադիրը եղավ, իսկ դրանից առաջ, համաձայն Առաքելոց վանքի արձանագրության, նա Առաքելոցի առաջնորդն էր: Կասկած չկա, որ Առաքելը Դեղձուտ է եկել Առաքելոց վանքից: Իսկ թե որտեղից է նա եկել Առաքելոց, կամ անմիջապես Տարսոնից է եկել, թե մեկ այլ վայրից, այս մասին չունենք որևէ հիշատակություն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ ժամանակաշրջանում պատահական մեկը չէր կարող վանահայր դառնալ: Դրա համար նա առնվազն պետք է վարդապետական գավազան ստացած լիներ նշանավոր բաբունապետից: Երկրորդական չէ նաև այն հանգամանքը, որ Հյուսիսային Հայաստանի վարդապետներն այդ շրջանում չափազանց նախանձախնդիր էին դավանաբանական հարցերում և Կլիկիայից եկած մեկին, եթե նա այստեղ թրծված ու համապատասխան կրթություն ստացած չլիներ, դժվար թե այդպիսի պաշտոն վստահվեր:

Գալով այն հարցին, թե ինչու Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին չեն հիշատակել Առաքելին, ապա դրանում տարօրինակ ոչինչ չկա. պատմիչները գրել են որոշակի դեպքերի մասին, և եթե Առաքելը դրանց հետ առնչություն չի ունեցել, բնականաբար չէր նշվելու: Փոխարենը, Գրիգոր Ակներցին, որ Կիրակոսի ու Վարդանի հետ Խորանաշատում աշակերտել է Վանական վարդապետին, իր Պատմության մեջ հիշում է Առաքելին՝ իբրև Վանականի գովելի աշակերտի և Վարդանի, Կիրակոսի ու Հովսեփի դասընկերոջ: Խոսելով Վանականի մասին՝ Ակներցին գրում է, որ նա իբրև արեգակ փայլում էր «երկրորդ արևելք» կոչված արևելյան երկրում և հեզությամբ ու խոնարհությամբ վարդապետական խոսքն էր քարոզում. «Փայլէր իբրեւ զարեգակն՝ Սուրբ Հոգի վարդապետն մեր Վանականն յերկիրն արեւելեան՝ երկրորդ արեւելք անուանեալ, լի լուսով եւ անհաս գիտութեամբ ամէնիմաստ Հոգւոյն Սրբոյ, զոր եւ բազում երկամբք եւ աշխատութեամբ ձրի բաշխէր զկերակուրն հոգեւոր, այսինքն զբան վարդապետութեան

հոգւոյն՝ նմանեալ երկնաւոր վարդապետին Քրիստոսի, հեզութեամբ եւ խոնարհութեամբ, լռութեամբ եւ երկայնմտութեամբ»[16], *ապա անմիջապես շարունակում է, որ այդպիսին են նաև նրա գովելի աշակերտները՝ Վարդանը, Կիրակոսը, Առաքելն ու Հովսեփը, որոնք արևելքի աշխարհը խաչաձև բաժանելով, լուսավորեցին իրենց վարդապետությամբ. «Նոյնպէս եւ գովելի աշակերտքն իւր Վարդան եւ Կիւրակոս, Առաքեալն եւ Յովսէփ խաչանման բաժանեալ զաշխարհն Արևելից լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ Հոգւոյն Սրբոյ։ Այլեւ բազում որդիս ի փառս ածին՝ ձրի բաշխելով զտիրական զխաչանիշ գաւազանն՝ նմանեալ փառաւոր վարդապետին իւրեանց»*[17]*։ Հենց Գրիգոր Ակներցու (իմա՝ Մաղաքիայի) հաղորդած այս տեղեկությունն է նկատի ունեցել Գ. Հովսեփյանը։ Կիլիկեցի Գրիգոր Ակներցին Վանականի աշակերտներից հիշում է այս չորսին և անունների հերթականությունը պատահականորեն չի դնում, այլ ըստ նրանց ճանաչման աստիճանի։ Իսկ նրանք, ուսուցչից ստանալով «խաչանիշ գաւազանը»՝ այսինքն վարդապետական աստիճան, նրա նման Արևելից աշխարհում տարածում էին վարդապետական լույսը։*

Խորանաշատից հետո՝ 1235-1239 թվականներին Վարդանը Կայենաբերդի Ս. Անդրեասի վանքում էր՝ որպես իր իսկ հիմնադրած դպրոցի րաբունապետ[18]*։ Կիրակոսը 1236 թվականին մոնղոլների բանակից փախչելուց հետո հաստատվել էր Գետիկավանքում, Վարդանը նրան կոչում է «րաբունիների պետ և մորենիների աղուտ անբուսաբեր վայրերի մշակ»*[19]*։ Հովսեփը Վանական վարդապետի ու Վարդան Արևելցու հետ մասնակցել է Հռոմի պապի հարուցած կրոնական վեճերին՝ պաշտպանելով հայոց եկեղեցու դավանանքը։ Նա հետո դարձավ Արտազ գավառի թեմակալ, 1248 թվականին վերաշինեց Թադեոս առաքյալի վանքը, կառուցեց գավիթը և ստեղծեց միաբանություն*[20]*։*

Հայոց Արևելից կողմում այս ժամանակաշրջանում Հ. Աճառյանը Վանականի աշակերտից բացի չի ճանաչում որևէ այլ Առաքել վարդապետի[21]*։ Առաքելոց վանքի ու Դեղձուտի արձանագրությունները, փաստորեն, լրացնում են Գրիգոր Ակներցու տեղեկությունները Առաքելի մասին, նրան ներկայացնելով որպես բանիբուն վարդապետի ու այդ վանքերի արդյունավոր վանահոր։*

Դեղձուտի վանքը՝ իբրև հոգևոր-մշակութային կենտրոն, իր ծաղկումն է ապրում Մահկանաբերդի իշխանաց իշխան և պատրոն Սադուն Բ-ի տիրապետության տարիներին։ Կիրակոս Գանձակեցին և Գրիգոր Ակներցին նրա մասին

---

16 Գրիգոր վրդ. Ակներցի, էջ 27։
17 Նույն տեղում, էջ 28։
18 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 311։
19 **Ղ. Ալիշան**, *Հայապատում*, Վենետիկ, 1901, էջ 471։
20 **Կիրակոս Գանձակեցի,** էջ 311, **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ. Գ, Երևան, 1946, էջ 716։
21 **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ. Ա, Երևան, 1942, էջ 208։

գրում են, որ Սադունը նաև ֆիզիկական բարձր կարողությունների տեր էր, պարթևահասակ ու քաջամարտիկ, ընտիր ըմբիշ ու վարպետ նետաձիգ էր, և իր արտակարգ ուժի շնորհիվ գրավել էր Հուլավու խանի ուշադրությունը: Վերջինս նրան դասել էր իր կտրիճներից առաջինների շարքում[22], իսկ երբ գահակալեց Հուլավու խանի որդի Ապաղա խանը (1265-1282), Սադունի հեղինակությունը Հայաստանում ու Վրաստանում է՛լ ավելի բարձրացավ, և համընդհանուր ճանաչում ձեռք բերելուց հետո Մահկանաբերդցիները նրա անունով կոչվեցին Սադունյաններ[23]: Սիրված լինելով Ապաղա խանի կողմից՝ Սադունն առաջին էր մեծ իշխանների շարքում[24]: Սադուն Բ-ը, իսկ հոր մահից հետո (1282 թ.) նրա որդի Խութլու Բուղան մեծ ներդրում ունեին գավառի հոգևոր-մշակութային կյանքում: Նրանց ժամանակներում վերելք էին ապրում հատկապես Հաղբատի, Դեղձուտի, Կիրանցի և Առաքելոց վանքերը:

Առաքելի դպրոցը ճանաչված էր իր մատենադարանով: Այստեղ ձեռագրերն արտագրվում էին «ընտիր և ստույգ» օրինակներից, և գաղափար օրինակ ունենալու համար Դեղձուտ էին գալիս անգամ նշանավոր Գանձասարից ու Նոր Գետիկից: Դեղձուտի դպրոցում գրչության արվեստի ուսուցիչ էր Առաքելը: Հիշատակարանները թողել են Առաքելի սաներից վեցի անունները, որոնք «ի վանս Դեղձուտի՝ առ ոտս Առաքէլ վարդապետի» եկել էին տարբեր վայրերից և ձեռագիր մատյաններ էին ընդօրինակում այստեղ: Դժբախտաբար, այս դպրոցի աշակերտների ընդօրինակություններից մեզ միայն երկու ձեռագիր է հայտնի, որոնք պահվում են Մաշտոցյան Մատենադարանում:

Առաքելի աշակերտներից էր Պաքուտա որդի և Հզարի թոռ «ընտրեալ քահանա» տեր Գևորգը, որը եկել էր «ի մեծահռչակ քաւարանէն Գանձասարայ» և «մակացու էր յերկիրս Մահկանաբերդոյ՝ ի վանս Դեղձուտի՝ առ ոտս Առաքէլ վարդապետի»: Այստեղ 1280 թվականին Գևորգն իրեն ուսումնակից Ավետիսի հետ օրինակում է մեկնությունների մի ժողովածու, որը պարունակում է Վարդան Արևելցու, Գրիգոր Նյուսացու, Բարսեղ Կեսարացու, Փիլոնի, Գրիգոր Աստվածաբանի, Նոննոսի գործերից[25]: Գրեթե տեղեկություններ չունենք Դեղձուտի գրչության կենտրոնի և ուսումնական ծրագրերի մասին, բայց այս հաղորդումից կարող ենք եզրակացնել, որ Առաքելի դպրոցում ուսման դասընթացների ծրագրերում ուշադրություն է հատկացվել մեկնողական երկերի ուսուցմանը և դրանց

---

22 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 386, **Գրիգոր վրդ. Ակներցի**, էջ 48, 49:

23 **Ստեփանոս Օրբելեան**, *Պատմութիւն նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910, էջ 426:

24 **Հ. Մարգարեան**, «Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում», *Հայկազեան հայագիտական հանդէս*, հ. ԺԸ, Պէյրութ, 1998, էջ 23:

25 ՄՄ ձեռ. 5254, թերթ՝ 257, նյութ՝ թուղթ, 12,5×19, գիր՝ բոլորգիր, տող՝ 23-26: Տե՛ս նաև **Ա. Մաթևոսյան**, *նշվ. աշխ.*, ԺԳ դար, Երևան, 1984, էջ 509:

տարածմանը: Արտագրության համար օրինակը Գևորգն ստացել է իր հոգևոր եղբայրներ Վահրամից ու Ստեփանոսից: Վերջիններս նույնպես Առաքելի աշակերտներն են, որոնք արդեն ավարտել էին Դեղձուտի գրչության դպրոցը և վերադարձել իրենց ծննդավայր՝ Արարատի գավառը: Վահրամին ու Ստեփանոսին սիրով է հիշում Գևորգը, որովհետև նրանք ոչ միայն օգնել են իրեն ընտիր օրինակ ունենալու, այլև միասին ապրելով նույն խցում՝ մխիթարել են գրչին պանդխտության օրերին. «...զաւրինակն սոքայ շնորհեցին, եւ ոչ միայն այս, այլեւ պանդխտութեանս իմոյ մխիթարիչք էին հոգեւոր եւ մարմնաւոր, քանզի ի միում խցի պանդխտանեաք... եւ յայսմ աւուր գնալով սոցա յերկիրն իւրեանց յԱյրարատեան գաւառն, տրտմութիւն հասուցին զիս միայն թողելով» (ՄՄ ձեռ. 5254, 54բ):

Դեղձուտից մեզ հասած երկրորդ ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ այստեղ եղել են նաև արժեքավոր, և որպես գաղափար օրինակ՝ փնտրված մատյաններ: Ալեքսիոսի և Գոհարի որդի «կրտսեր և յետին սպասաւոր բանի» Սարգիսը, որ սովորել էր Գետիկի վարդապետարանում և հասել էր որոշակի դիրքի, 1280 թվականին՝ «ի նեղ և ի դառն ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց տիրել ունեին ազգն նետողաց... եւ Ապաղանն ունէր զբռնակալութիւն», եկել-հասել է Դեղձուտ՝ «առ ոտս կենդանի վիմիս Առաքելի վարդապետի ի գաւառիս Մահկանաբերդոյ՝ ի պատրոնութեան աթապակ Սադունի»: Ձեռագիր օրինակը Սարգիսը շատ երկար է փնտրել, ի վերջո այն ձեռք է բերել Առաքել վարդապետի դպրոցում. «ըղձացեալ այս մատենի և անձնատատան աշխատութեամբ և քրտնաջան ջանիւք և բազում տառապանօք դժուար ի գիւտ գրչաց ետու գծագրել զսա»: Այստեղ Առաքելի աշակերտներից Գրիգոր և Շմավոն գրիչները Դեղձուտում եղած օրինակից Սարգսի համար արտագրում են Տոնապատճառ ժողովածու և կազմում են այն. «Գրեցաւ Տաւնապատճառս ի թվին ՉԻԹ.(1280) եւ կազմեցաւ յաւուր վճարման, մարերի ԻԸ (28)-ն եւ Հոռոմոց նոյեմբեր Դ (4)-ն՝ յաշնան եղանակիս, որ ահագին շարժ եղեւ ի մէջ գիշերիս»[26]: Ժողովածուի հիշատակարանում Սարգիսը ծնողներին, եղբայրներին՝ Հարոնին և Գառնիկին, հարսին՝ Թամթիխաթունին հիշելուց հետո խնդրում է հիշել Սարգիս ռաբունապետին, ուսուցիչներին, հատկապես իր հոգևոր հորը՝ ծերունի Դավթին:

Վերջին անգամ Առաքելը հիշվում է Դեղձուտի 1292 թվականի արձանագրության մեջ, երբ Միջագետքից Ասիլ անունով մեծահարուստ մի վաճառական ուխտի էր եկել Դեղձուտ և մեծ նվիրատվություններ կատարել. «Ի թվիս ՉԽԱ (1292) յառաջնորդութեան Առաքել վարդապետի ես՝ Ասիլս եկի յերկրէն Միջագետաց ի սուրբ ուխտս»[27]: Ուրեմն՝ 1292 թվականին դեռևս կենդանի էր Առաքել

---

[26] ՄՄ ձեռ. 5197, թերթ՝ 436, նյութ՝ թուղթ, 17,5×12,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 22-37: Տե՛ս նաև **Ա. Մաթևոսյան**, *նշվ. աշխ., ԺԳ դար*, Երևան, էջ 497:

[27] *Դիվան*, պրակ VI, էջ 117:

վանահայրը։ Հավանաբար կարճ ժամանակ անց, խոր ծերության հասակում, Առաքել վարդապետը վախճանվում է և թաղվում վանքի գավիթում։ Բնութագրական են նրա տապանաքարին գրված խոսքերը՝ «Այս է արձան մեական եւ շիրիմ հանգստարան Առաքելի հռչակաւոր վարդապետի»[28]*։*

TAMARA MINASYAN

AṚAK‘EL VARDAPET (ARCHIMANDRITE) AND THE SCRIPTORIUM OF DEGHDZUT

Keywords: Province Kayen, Monastery Aṛak‘elots’ (of Holy Apostles), Mahkanaberd, Vanakan Vardapet, Tarsus, scriptorium, archetype manuscript.

The article discusses the scriptorium of the Deghtzut monastery in the historical province Kayen. The personality of its head Aṛak‘el Vardapet is examined separately. According to the building inscription of 1274, Aṛak‘el arrived there from the Cilician province Tarsus and became the head of the monastery. However at that time a random person could not become head of a monastery. For this purpose, it was necessary to have at least received the vardapet degree from a distinguished prior of a monastery. It is also important that the vardapets of northern Armenia were overly scrupulous in confessional issues and someone coming from Cilicia would hardly have been entrusted with such a post if he had no proper local education. Our analysis of the facts leads to the conclusion that Aṛak‘el was a disciple of Vanakan Vardapet. Having received the archimandrite degree from him in the monastery of Khoranashat, he came to Deghtzut and founded a scriptorium there.

ТАМАРА МИНАСЯН

ВАРДАПЕТ АРАКЕЛ И СКРИПТОРИЙ ДЕГЦУТА

Ключевые слова: Провинция Кайен, монастырь Аракелоц (Святых Апостолов), Махканаберд, Ванакан Вардапет, Тарс, скрипторий, протограф.

В статье представлен скрипторий монастыря Дегцут исторической провинции Кайен. Особо рассматривается вопрос о личности настоятеля – вар-

[28] *Դիվան*, պրակ VI, էջ 116:

дапета (“учителя церкви”) Аракела. Согласно строительной надписи монастыря Дегцут (1274 г.), Аракел прибыл туда из киликийской провинции Тарс и стал его настоятелем. Случайный человек такой чин получить не мог. Для этого он должен был, по крайней мере, получить вардапетский посох от другого известного настоятеля. Важно и то обстоятельство, что вардапеты Северной Армении были чрезвычайно щепетильны в конфессиональных вопросах и приезжему из Киликии вряд ли доверили бы такой пост, если бы он не имел должного местного образования. Анализ фактов приводит к заключению, что Аракел был учеником Ваканана Вардапета; получив степень вардапета от Ванакана в монастыре Хоранашат, он прибыл в Дегцут и основал там скрипторий.